# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 13-ը մարտի 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

Ընդունել ի գիտություն, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ՊԺԿ-ի 20.03.2018թ. N 154/ԴՎԱ հրամանով հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ է սահմանվել ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյանը:

Հաշվի առնելով «Տիսա» ՓԲԸ-ի՝ գնահատող հանձնաժողովին ուղղված գրությունը (կցվում է)՝ գնահատող հանձնաժողովը 21.03.2018թ., ժամը 15:00-ին կայացած նիստում հանձնաժողովը քննարկեց դա և որոշեց մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկել դրա վերաբերյալ դիրքորոշում(կցվում է): Միաժամանակ հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

**29.03.2018թ., ժամը 15:30**-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին**

(Ռ. Մարդոյան)

**1.1** ՀՀ ՊՆ կարիքների համար «Շինանյութերի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանում |
|---|---|
| 1 | ԱՁ Գալուստ Աղումյան |
| 2 | ԱՁ Նաիրի Թորոսյան |
| 3 | «Բարսեղյան Եղբայրներ» ՍՊԸ |
| 4 | «Էյչ Գրուպ» ՍՊԸ |
| 5 | «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ |
| 6 | «ԼՈՒՍԱԼ» ՍՊԸ |
| 7 | «ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ |
| 8 | «ՄԱՆԳՈՒԳ ՍՊԸ» |
| 9 | «Մեծ Ծիածան» ՍՊԸ |
| 10 | «ՄԻԿԱՐՏ» ՍՊԸ |
| 11 | «Նարսան» ՍՊԸ |
| 12 | «Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ |
| 13 | «Սեմուր ընդ Կո» ՍՊԸ |
| 14 | «ՎԱՐԲԱԴ» ՍՊԸ |
| 15 | ԱՁ ԳՐԻԳՈՐ ԱՅՎԱԶՅԱՆ |
| 16 | «Եթերակ» ՍՊԸ |
| 17 | «Էքսպրես Շին» ՍՊԸ |
| 18 | «Էֆֆեկտ Գրուպ» ՓԲԸ |
| 19 | «Կավաշեն» ՍՊԸ |
| 20 | «ՄԱԿՐՈ ՖՈՒԴ» ՍՊԸ |
| 21 | «ՄԱՐՄՈՆԱ» ՍՊԸ |
| 22 | «Մեհրաբյան և որդիներ» ՍՊԸ |
| 23 | «ՆԱՐԴԻՆՈ» ՍՊԸ |
| 24 | «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ |
| 25 | «Սեմանգ» ՍՊԸ |
| 26 | «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ |
| 27 | «ՏԻՍԱ» ՓԲԸ |
| 28 | «ԱՍԷԴԼ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ **«ԱՍԷԴԼ» ՍՊԸ**-ի. մասնակցի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի որևէ փաստաթուղթ կցված չէ, ուստի հանձնաժողովը դրանք բեռնելու և գնահատելու հնարավորություն չունի:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- «Լուսալ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցել է «Թուրվանդ» ՍՊԸ-ի հետ միասին՝ համատեղ գործունեության պայմանագիր կնքելու միջոցով, սակայն ներկայացված բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը և հայտի ապահովումը լրացված են միայն «Լուսալ» ՍՊԸ-ի կողմի՝ չնայած էլեկտրոնային եղանակով ստորագրված են համատեղ գործունեության պայմանագրի երկու մասնակիցների կողմից: Առաջացած հարցի վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանում ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել լիազորված մարմնին և նիստը շարունակել անհրաժեշտ պարզաբանումը ստանալուց հետո:

**16.04.2018թ. ժամը 09:40-ին** կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները: Լիազորված մարմնի 07.04.2018թ (ստացվել է 11.04.18թ.) N 03/27-1/6436-18 գրությամբ որևէ պարզաբանում չներկայացվեց. դրանով ընդամենը նշված էր, որ մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը:

Կրկնակի ուսումնասիրելով «Լուսալ» ՍՊԸ-ի (համատեղ գործունեությամբ «Թուրվանդ» ՍՊԸ-ի հետ) կողմից ներկայացված հայտը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց այն գնահատել հրավերի պահանջներին ոչ համապատասխան և մերժել հետևյալ հիմնավորմամբ. ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 2.7 կետի մեկնաբանության մեջ հստակ սահմանված է, որ «Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում հայտում ներառվող՝ մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը պետք է հաստատված լինեն կոնսորցիումի բոլոր անդամների կողմից, բացառությամբ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթղթերի, որոնք հաստատվում են կոնսորցիումի առանձին անդամների կողմից՝ համաձայն կոնսորցիումի պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության», քանի որ որակավորման չափանիշներին վերաբերող փաստաթուղթը ըստ էության հրավերի N 3 հավելվածով նախատեսված՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունն է, որը վերաբերվում է հրավերով սահմանված որակավորման բոլոր չափանիշներին (Մասնագիտական փորձառություն, Տեխնիկական միջոցներ, Ֆինանսական միջոցներ, Աշխատանքային ռեսուրսներ) և դրանցից յուրաքանչյուրի մասով առանձին հայտարարություն ներկայացնելու վերաբերյալ հրավերով որևէ պահանջ չկա, ուստի ստացվում է, որ հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է լրացվեին և ստորագրվեին կոնսորցիումի բոլոր անդամների կողմից: Ընթացակարգի հրավերի 2.7 կետի 3-րդ ենթակետի համաձայն համատեղ գործունեությամբ հանդես եկող մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն, իսկ պատասխանատվությունը կրելու համար նախ անհրաժեշտ է այդ պատասխանատվությունը ստանձնել, որը այս դեպքում պետք է դրսևորվեր ոչ միայն հայտով նախատեսված փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով հաստատելու այլ դրանք լրացնելու և հավաստելու եղանակով, որովհետև եթե ներկայացված փաստաթղթերը լրացվել և հավաստվել են միայն «Լուսալ» ՍՊԸ-ի կողմից, ապա ստացվում է, որ «Թուրվանդ» ՍՊԸ-ն էլեկտրոնային ստորագրությամբ հաստատում է ոչ թե իր, այլ «Լուսալ» ՍՊԸ-ի համապատասխանությունը և համաձայնությունը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին և նման դեպքում խոսք չի կարող գնալ համատեղ և համապարտ պատասխանատվություն մասին:

- **«Ռեալ Բուսինեսս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտի ապահովման գումարը պակաս է մասնակցի գնային առաջարկի 5%-ի չափից:
- **«Սեմուր ընդ Կո» ՍՊԸ-ի** հայտը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի 8.19 կետի պահանջներին (փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ),
- **«Սթիլ Կոնցեռն»** ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին, քանի որ N 5 հավելվածի «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում նշված թվերի հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» դաշտում նշված թվին, ընդ որում գնահատումն իրականացնելիս հանձնաժողովը հիմք է ընդունել «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում թվերով լրացված գումարները, քանի որ տառերով լրացված գումարները հնարավոր չէ գնահատել. դրանց մի մասը գրված է տառերով, մի մասը՝ թվերով. օրինակ լրացված է՝ տասնութ միլիոն յոթ հարյուր ութ հազար երեք հարյուր երեսուներեք դրամ **33** լումա: Գումարը տառերով հիմք ընդունելու համար անհրաժեշտ է, որ այն ամբողջությամբ գրված լինի տառերով):

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՍԵԴԼ», «Լուսալ», «Ռեալ Բուսինեսս», «Սեմուր ընդ Կո» և «Սթիլ Կոնցեռն» ՍՊԸ-ների հայտերը:

- **«Միկարտ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված մասնակցի իրական շահառուների մասին տվյալների լրացման կարգը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին (իրական շահառուի հայրանունը նշված չէ),
- **«Տիսա» ՓԲԸ**-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է ընթացակարգի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված՝ մասնակցի իրական շահառուների մասին տվյալների վերաբերյալ հայտարարությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Միկարտ» ՍՊԸ-ին և «Տիսա» ՓԲԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները: Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից պահանջվող շտկումները ներկայացնելու հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել «Միկարտ» ՍՊԸ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի կողմից որպես շտկում ներկայացվելիք փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Աբովյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |

16.04.18թ.

# <<ՏԻՍԱ>> ՓԲԸ

Հասցե՝ ք. Երևան , Մալաթիա-Սեբաստիա,
Անդրանիկի փողոց, 16, շինություն 7
Հեռախոս՝ 094951285
Էլ. Հասցե՝tisa1920@mail.ru

*ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓԶ վարչության բաժնի պետ,*
*ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ. Մարդոյանին*
*ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19 ծածկագրով ընթացակարգի*
*գնահատող հանձնաժողովին*
*հասցե՝ Ք. Երևան, Բագրևանդի 5*

# Դիմում

<<ՏԻՍԱ>> ՓԲԸ-ն 12.03.2018թ.-ին հայտ է ներկայացրել և մասնակցել ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19 ծածկագրով շինանյութի մատակարարման ընթացակարգին: Ընթացակարգի հրավերով ՀՀ ՊՆ-ն գնման ժամանակացույցով նախատեսել է ապրանքների քանակը հետևյալ կարգով.

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /դրամ/ | Ընդհանուր գումար /դրամ/ | Մատակարարման ենթակա քանակներն՝ ըստ 2018թ. համապատասխան ամիսների | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր |
| 1 | Ավել, սովորական (Ավել) | հատ | 20,000 | | | | | 10,000 | 10,000 |
| 2 | Դռներ (Դուռ մետաղապլաստե) | մ$^2$ | 200 | | | 100 | 50 | 50 | |
| 3 | Լինոլեում (Լինոլեում) | մ$^2$ | 5,000 | | | 5,000 | | | |
| 4 | Խողովակներ (Մետաղական խողովակ, Φ57) | գծամետր | 3,500 | | | | 3,500 | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | Խողովակներ (Մետաղական խողովակ, Ф76) | գծամետր | 2,000 | | | | 2,000 | | |
| 6 | Ներկ (Ներկ մոխրագույն) | կիլոգրամ | 30,000 | | | 15,000 | 15,000 | | |
| 7 | Պատուհաններ (Պատուհան մետաղապլաստե) | մ² | 600 | | | 200 | 200 | 150 | 50 |
| 8 | Տանիքի նյութեր (Ասբոշիֆեր) | հատ | 4,000 | | | | | 4,000 | |
| 9 | Ցեմենտ (Ցեմենտ) | տոննա | 500 | | | 150 | 150 | 200 | |
| 10 | Ցեմենտ (Ցեմենտ) | տոննա | 108.1 | | | 108.1 | | | |
| 11 | Գերաններ (Գերան) | մ³ | 71.4 | | | 71.4 | | | |
| 12 | Խողովակներ (Մետաղական խողովակ d=48 մմ) | գծամետր | 20,400 | | | | 20,400 | | |
| 13 | Ներկ՝ լատեքսային (ներկ լատեքսային) | կիլոգրամ | 25,000 | | | 15,000 | 10,000 | | |
| 14 | Ներկ-էմալ, գույնը՝ սպիտակ (Ներկ սպիտակ) | կիլոգրամ | 10,000 | | | 10,000 | | | |
| 15 | Շինարարության մեջ օգտագործվող զանազան այլ ապրանքներ (Տաշտակ ցինկապատ) | հատ | 4,500 | | | 4,500 | | | |
| 16 | Պրոֆնաստիլ(Պրոֆնաստիլ զինվորական նախշով) | մ² | 5,000 | | | | 5,000 | | |
| 17 | Պրոֆնաստիլ (Պրոֆնաստիլ) | մ² | 15,000 | | | | 5,000 | 5,000 | 5,000 |
| 18 | Տախտակ (Տախտակ 6x12) | մ³ | 50 | | | 50 | | | |
| 19 | Տախտակ (տախտակ) | մ³ | 130 | | | 30 | 100 | | |

Ընկերությունը գնային առաջարկը պատրաստելիս ուսումնասիրել է գնման ժամանակացույցը, որտեղ ապրանքների քանակը նշված է եղել, օրինակ, ***20,000; 5,000; 30,000; 4,000:*** Գնման ժամանակացույցում նշված թվերից հետո նշված ստորակետը և այնուհետև նշված մնացած նիշերը թվաբանորեն նշանակում է, որպես տասնորդական և հարյուրերրորդական քանակ, այդ իսկ պատճառով գնային առաջարկը ներկայացրել է համապատասխանաբար մինչև ստորակետը նշված քանակի հանրագումարի չափով: Այսինքն 20 միավոր, 5 միավոր, 4 միավոր և այսպես շարունակ: Նույն գնման ժամանակացույցում 10-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է ապրանքի քանակ և նշվել է հետևյալ կերպ՝ 108.1: Այս պարագայում ընկերությունը սա դիտարկել է որպես 108.100 <<հարյուր ութ տոննա հարյուր կգ.>>:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն հանգամանքը, որ ընկերությունը գնային առաջարկը ներկայացնելիս առաջնորդվել է Ձեր կողմից հրապարակված հրավերի գնման ժամանակացույցով նախատեսված քանակներով, խնդրում եմ ընկերության կողմից ներկայացված ապրանքների քանակը հաշվել մինչև ատորակետը նշված քանակը, իսկ եթե նման ձևով հաշվարկի դեպքում նշված միավորի գինը բարձր կլինի ներկայացված մյուս գնային առաջարկներից, ապա խնդրում եմ ընկերության հայտը նշված չափաբաժինների մասով գնահատել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

<<ՏԻՄԱ>> ՓԲԸ-ի տնօրեն Ի. Հակոբջանյան

13.03.2018թ.

2081
13 03 18թ.
3
(2)

«ՏԻՍԱ» ՓԲԸ-ի տնօրեն
Ի. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովին Ձեր կողմից ուղղված 13.03.2018թ. գրության՝ հայտնում ենք, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի գնման ժամանակացույցի «Քանակ» դաշտում լրացված թվերը ընդհանուր տրամաբանության տեսանկյունից որևէ տարըմբռնման տեղիք չեն տալիս, մասնավորապես, օրինակ 1-ին չափաբաժնում նշված 20,000 (քսան հազար) թիվը չի կարող ընկալվել որպես 20 (քսան), որովհետև այդ սկզբունքով առաջնորդվելիս գնման ժամանակացույցում առանց ստորակետի տրոհման որևէ թիվ չպետք է լիներ, այնինչ 2-րդ, 7-րդ, 9-րդ, 18-րդ և 19-րդ չափաբաժինների քանակները նշված են առանց ստորակետի տրոհման՝ 200 (երկու հարյուր), 600 (վեց հարյուր), 500 (հինգ հարյուր) և այլ: Ստորակետով տրոհված թվերը ամբողջի և տասնորդականի տրոհում ևս չէին կարող ընկալվել, քանի որ 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով այդ տրոհումը կատարվել է կետի միջոցով, ինչը Ձեր կողմից ըստ գրության ճիշտ է ընկալվել և հետևաբար ինչպես կարող էր նույն հրավերի մեջ ամբողջի և տասնորդականի տրոհումը իրականցվեր մի դեպքում ստորակետի (4-րդ չափաբաժին), իսկ մեկ այլ դեպքում կետի միջոցով:

Թվերի՝ ստորակետով տրոհումը ստացվել է «Microsoft Office Excel» ծրագրից դրանք «Microsoft Office Word» ծրագիր տեղափոխելու արդյունքում, որը մեր կարծիքով ավելի պարզ և ընկալելի է դարձնում դրանք: Հատկանշական է, որ «Armeps» համակարգում Ձեր կողմից լրացված գնային առաջարկի թվերը ևս տրոհված են ստորակետի միջոցով, ինչը հանձնաժողովի կողմից իրավաչափ է գնահատվել:

Միաժամանակ, հայտի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ի սկզբանե Ձեր կողմից քանակները ճիշտ են ընկալվել, քանի որ Ձեր առաջարկած սկզբունքով գնահատելիս սովորական ավելի մեկ միավոր գինը ստացվում է 56,300 (հիսունվեց հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, մեկ քմ. լինոլեումի գինը՝ 1,748,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ, մեկ կգ. ներկի գինը՝ 754,000 (յոթ հարյուր հիսունչորս հազար) ՀՀ դրամ, ինչը իրատեսական չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից ընդունելի չէ Ձեր առաջարկած սկզբունքով գնահատման իրականացումը:

**«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողով**

**21.03.18թ.**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

19-ը ապրիլի 2018թ.
ժամը $11^{00}$

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝**

ՀՀ ՊՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. Աբովյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՁԲՖԿ ծառայության պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա. Պապյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բադալյան,

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,

**Գնումները համակարգող՝**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

1. «Միկարտ» ՍՊԸ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի կողմից որպես շտկում ներկայացվելիք փաստաթղթերի քննարկման մասին
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
3. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**1. «Միկարտ» ՍՊԸ-ի և «Տիսա» ՓԲԸ-ի կողմից որպես շտկում ներկայացվելիք փաստաթղթերի քննարկման մասին**

---

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Միկարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընթացակարգի հրավերի 2.1 հավելվածով նախատեսված հայտարարության շտկված տարբերակը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց դա գնահատել հրավերի պահանջներին համապատասխան;

1.2 Հանձնաժողովն արձանագրեց, որ «Տիսա» ՓԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել առկա անհամապատասխանությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «Տիսա» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

1.3 Քանի որ «Տիսա» ՓԲԸ-ի մերժման արդյունքում 11-րդ չափաբաժնի մասով առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 25.04.2018թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել նշված օրը:

**25.04.2018թ. ժամը 11:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին բանակցություններին ներկայացավ «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Բանակցությունների արդյունքում վերջինս համաձայնվեց 11-րդ չափաբաժնի մասով գնային առաջարկը նվազեցնել 5,569,200 ՀՀ դրամի (ներառյալ ԱԱՀ):

**2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին**

---

(Ռ. Մարդոյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. Տես արձանագրությանը կից Հավելված N 1

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ թիվ 3 արձանագրության 2.3 կետով նախատեսված դեպքերի: Ա/Ձ Նաիրի Թորոսյանի կողմից 6-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես, N 5 հավելվածի «Արժեքը» և «ԱԱՀ» դաշտերում նշված թվերի հանրագումարը չի համապատասխանում «Ընդհանուր գինը» դաշտում նշված տառերով լրացված թվին: Հիմք ընդունելով նշված հանգամանքը՝ հանձնաժողովը որոշեց 6-րդ չափաբաժնի մասով մերժել Ա/Ձ Նաիրի Թորոսյանի հայտը:

3.3 Քանի որ «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով առաջարկված գները գերազանցում են պատվիրատուի՝ տվյալ գնման համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնահատող հանձնաժողովը որոշեց, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 02.05.2018թ. ժամը 11:30-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ և նիստը շարունակել այդ օրը:

**02.05.2018թ., ժամը 11:30-ին** կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետին բանակցություններին որևէ մասնակից չներկայացավ, ուստի առաջարկված գները չնվազեցվեցին և դրանք թողնվեցին առանց փոփոխության:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) հանձնաժողովը որոշեց 12-րդ և 17-րդ չափաբաժինների մասով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ- ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

Հաշվի առնելով ընթացակարգի չափաբաժինների և հայտ ներկայացրած մասնակիցների համեմատաբար մեծ քանակը՝ հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել «Armeps» համակարգում հայտերի էլեկտրոնային գնահատումն իրականացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

---

*(Ռ. Մարդոյան)*

4.1 **03.05.2018թ** (էլեկտրոնային գնահատման արդյունքում) «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները. տես Հավելված N 1: Բավարար գնահատված մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղեր զբաղեցրած մասնակիցներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

---

(Ռ. Մարդոյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/19» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

| | |
|---|---|
| Գնահատող(ԳԱՊ) | Ս. Աբովյան |
| Գնահատող | Ա. Պապյան |
| Գնահատող | Հ. Բաղալյան |
| Գնահատող | Ա. Մաղաքյան |
| Գնումները համակարգող՝ | Ռ. Մարդոյան |